

այդ կետը մերոնց մէջ բնաւ պակասութիւն չունի և չէ ունեցել քառ լիցի: Մենք ամեննեն այդ մաքէն չենք: Մենք գիտենք որ մարդոց կարծէքով ամենակատարելութեան հասած բանն ալ, բազում անդամ ապացուցվում է, որ շատ թերութիւն ունի: Մեր ասածը այս և թէ նկեղեցին այդ օրէնքը ըստ արժանույն սրբացրած է մեծապէս սատար լինելով ժողովրդոց բարյականի և օրինաւորութեան մէջ պահելուն և պահպանուելուն, իր հիմնական կէտերը վսեմ են: Առկայն բնականաբար ժողովութեար թէ հին ժամանակներումը, և թէ այժմ ժամանակնդ իր քաղաքական ազատութիւնը կորցնելն յետ, մածած է և կմուծանէ իրան մէջ, աւելորդ և իրան վնասակար արտաքին ձևեր և սովորութիւններ, որոնք ամենայն ժամանակ իրանց լաւ կողմերի և լաւ ազդեցութեանց հետ, ունեցել են և ունին առաւել վաս կողմերը և վաս ազդեցութիւնը: Այս կէտին մէջ, ինչպէս և ուրիշ բաների նկատմամբ քաղաքացի չայց գիւղացւոցմէ շատ առաւել իրան անհնատուր արած է տարբերի սովորութեանց և այլ ձևերին, որոնք կամաց կախանեն և հիմն ի վեր կտապալեն ինչպէս իրան ամուսնական, այնպէս և ուրիշ կէտերը, եթէ ինքը իրան յետ չկասեցնէ իւր գնացած ճանապարհն:

(Մասցեան է յերաժայու:)

ԵՐԿՐՈՇՈՐԺԻ Ի ՇՈՒՄԱՆԻ:

Ի 16-ն ամսոյս յաւուր Կիւրակէի ի 10-րդ ժամու առաւոտեան (ըստ եւրոպ.) ցարդ տեսնուածներէն առաւել յոյժ սաստիկ երկրաշարժ պատահած է ի Շամախի, և քառասուն վայրկենի չափ յարելից յարեւմուաս ցնցելով երկիր՝ ապա թօմափած է, որով բազում վնասներ և իր 200 անձինք ընդ վլատակօք թաղուած և մեռած են՝ բաց ի կիսամեռ և վնասեալ անձանց՝ զորս հանած են վլատակաց նելքելն:

Համախոյ 7000ի մերձ բնակարաններէն և այլ շինուածքներէն զրեթէ հարիւրը հազիւ առանց վնասուց ինչ մնացած է, իսկ բազումք խախտեալ, կիսակործան և խսպառ յերկիր կործանած են:

Փլատակաց ներքեւ մեռածներէն մեծ և փոքր 25-6 անձինքը հայք են, և 22 անձինք լուտերական - հայք, որք իւրեանց ժողովարանի աւերակաց մէջ զրկուած են կեանքերէն: — Համեմատելով ալլօց ազգաց հետ՝ Հայոց կորուստը առաւել մեծ է:

Մահմետականաց մի մեծ մզկիթը կիսով չափ կործանած է:

Կայսերական Կառավարութիւն 20.000 ռուբ լի շնորհած է ի նպաստ աղքատ և թշուառ ըլլակչաց Շամախուոյ:

Եւ ինչպէս գրած է Գեր. Անդրէաս Ս. Արք եպիսկոպոս,

ԱԽԱԿ Մայր Եկեղեցւոյ տեղւոյս աղետալի է տեսարան. Կաթուղիկէ և զանգակատուն նորին կործանեցան խոպառ. արևմտեան որմն եկեղեցւոյն պատառեալ է սաստիկս և ի տեղիս տեղիս փլուզեալ և միւս կողմանցն աննորոգելի բացեալ են պատառուածք, և յեկեղեցական սպասուցն և կայից ոչնչացեալ: Նոյնպէս Առաջնորդարանն, յորում զետեղի և Կոնսիստորիայն, մանաւանդ հոգևոր ուսումնարանն խախտեալ են ամենուստէք, յորս կարի երկիւղալի է բնակիլ. Հնաշէն եկեղեցի մեր և եթ կայ ի կանգուն, յոր և ոչ ոք վստահանայ ի պատճառս բազում Ճեղքուածոց որմանցն նորին, :

«Զայսոցիկ ամենից ծանուցանելով Չերոյին Վեհափառութեան աղաքեմ, Բարեխնամ Հայր, ողորմութիւն հասուցանել ժողովրդոցս մերոց հայզգեաց, որոց ամենայն յոյս և ակնկալութիւն ի Չեղ ամփոփին: Նուաստու ըստ պարտաւորութեան իմում փութացայ յորդորել զբարեպաշտ ժողովրդականս քաղաքաց վիճակիս ի տուրս ողորմութեան ի ձեռն տեղական բարեկարգչաց հասուցանել դրամական օգնութիւն գոնէ այնոցիկ թշուառագոյն եղելոց ի մերազգի բնակչաց քաղաքիս, որոց դժուարին է գտանել զաւուրն պարէն,

Ուստի Վեհ. Կաթուղիկոս պատուիրեց Սինօդի Մայր Աթոռոյս՝ փութալ տնօրինել, որպէս զի Առուսաստանի մեր Հոգեւ. իշխանութեանց միջոցքը կամաւոր նուերներ հաւաքուին ի նպաստ վեասեալ դժբաղտ շամախաբնակ Ազգակցաց մերոց և ի վերանորոգութիւն Եկեղեցւոյ և Հոգեւ. ուսումնարանի տեղւոյն:

Արդարեւ զառն է մեր շամախաբնակ Ազգայնոց վիճակը, որ ձմեռ ժամանակ փողոցաց մեջ վրանարնակ կապրին թշուառութեամբ, և բազում այն է զի շատեր արդէն կդժուարանային իւրեանց ապրուստը հոգալ, այժմ խսպառսպուռ կը տազնապին և կկարուին աւուր պարենի, զոր հայթայ-

թել չկարեն : Վասն որոյ յորդոր կկարգամք մեր Ազգայնոց, որպէս զի բարեհաճին և փութեան ըստ կարեաց ձեռն օգնութեան կարկառել այն ողորմելի եղբարց, որք բաղդին ձեռքը խաղալիք դարձած են, և քանի քանի անգամներ բաւական և մեծամեծ վլասներով ձնչուած կը տողորին ի զրունս անըմբերելի նեղութեանց և թշուառութեանց .ուրիմ սիրելի Ազգայինք, փութացէք և օգնեցէք նոյցա, և բարոյապէս միմիթարելով վերականգնեցէք թէ զնոսա և թէ նոյցա Եկեղեցին և ուսումնարանը, որպէս զի թող մեր կրիստոնի պարտքերը մեծապանծ փառաւորուին՝ յաւէտ զգացած և գիտացած լինելով սիրել մեր եղբայրները, և ի պահանջել հարկին կարեկից գտանել նոյնին վիճակաց, օգնելով թէ բարոյապէս և թէ նիւթապէս :

ԳՐԱԾՈՒՆ Ի ՆՈՐ—ՆԱԽԻՁԵԽԱՆ.

Պ. Յ. Տէր - Աբրահամեան բաւական հարուստ գրատուն բացած է ի Նոր - Նախիջևան, ուր նաև ի Ա. Պոլիս, ի Փարիզ, ի Աննետիկ, ի Աննայ, ի Զմիւնիա և յերուսաղէմ տպագրեալ զրեանց մեծ մաս կը գտնուին և կը վաճառուին :

Նոյնպէս նոյն Պարոն կիմացնէ յետ Հրութեամբ, որ գրասենեկին մօտ տպարան բանալց և մի լրագիր հրատարակելոյ համար չետամուտ է :

Աւրախութեամբ ընթերցաք Պօլոյ Ազգ. լրագրաց մէջ, զի բազմանուու և հնագէտ Պ. Մօրթման Գերմանացին յաջողածէ քսան և վեց տարի անխոն աշխատաթենէն զիկ գտանել Վանայ և այլոց եղեցեց մէջ եղած սեպանձ տառիք արձանագրութեանց բանալիքը, որով և ընթեռնուլ նոյն արձանագրութեամբ:

Միժայոյս եմք Աբրահամ ամսագրոյս միջոցաւ հրատարակեալ սեպատառ արձանագրութեանց լուծումը ստանալ ի նոյն Պ. Մօրթմանէ, և հազորել մերազնեկից Բառ խնդրանց նորին, Աբրահայ արձանագրութիւնքը լուսանկարած յշած եմք ինքեան :

Վանայ արձանագրութեանց լուծման առթիւ յիշեալ հնագէտ պարունին յընթերցարանն Յունաց Կ. Պօլոյ համառատ իմն խօսած առենաբանութիւնը, զոր Կ. Պօլոյ ազգայիններէն Պ. Կմմանեւէլ Սայյեան համառատագրած և հրատարակած է տեղայս Աբրահամ լրագրի միջոցաւ, ստորև կը հազորւեմք մերազնեկից կողմանցու

ՏՕՔԹԷՕՐ ՄՈՐԹՄԱՆ

ԵԿ ՎԱՆԱՑ ՍԵՊԱԶԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Դեկտեմբեր ամսոց 13/ 25 ին, ինչպէս որ Լէվանդ Հերալտ մայրաբաղաքիս օրագիրը կանխաւ ծանուցեր էր, (թերեւս ուրիշ թերթեր ալ) Բերա Յունաց Քլիւալը՝ հրաւեր մը կարդաց քաղաքիս լուսաւորեալ և ուսումնասէր հասարակութեան, բոլոր Եւրոպից մէջ իւր անհուն չմտութեամբը աշխարհածանօթ՝ մէծանուն Տօքթէօս Մորթմանի իմաստափրական մակացութեանց վարդապետի ձեռքոք՝ այնքան դարերէ ի վեր անընթեանկի մնացած Վանայ սեպանձեւ արձանագրութեանց լուծումը աւետելով : Այս մեր սրտառուէ յիշատակաց և Հայութեան խանձարոց բնագաւառ՝ երբեմն երկրաւոր դրախտին՝ այժմ՝ կառավարութեան անձեռնչաստութենէն, անօրէն և վարագասուն Քիւրտերու ձեռքը մնալով՝ դժպչի արիւնչեղութեանց, կրօնի և ազգութեան դէմ անընհչաւ խոշանգաց, կուսից առևանգութեանց և քստմելի ոճրագործութեանց հանդիսարան եղած Վանայ չնաշխարհիկ բարձրաւանդակին համար եղած հրաւերին՝ Ճշմարիտ Հայու մը սիրար չէր կրնար չիրաբախել : Այս սիրարի գաւառու ուր զոր սահմանակից Տուրութերան աշխարհին հետ միասին առնլով, բուն իսկ Հայկարան կը նամք կուել՝ մեր գիւցախուոն նահապետին շահատակութեանց ասպարէզ և իրեն ու որդուց և թոռանցը բնակարան լինելով իւր Հայկաշնի, Աստուածաշնի, Գերեզմանաց ըլոոց, Բէլուայ, Տշողի, Նմինուսայ հանդիսավայրք և յետոյ մեր Արայի Գեղեցկի տարփածու աշխարհածագուհուոյն Շամիրամակերտի շինութեամբք ճոխացեալ ինչպէս որ ի զրոց և յաւանգութեանց զիտէնք մինչեւ այս օրս, այն աշխարհը որ յետ բազմադիմի և յարափոփոխ յաջող զիպաց և ձախող արծակից, միջին դարու ժամանակ՝ Արծրունի Վասպուրական ժագաւորաց նախանձընդդէմ միմեանց գեղեցիկ յօրինուածներովը և անկից առաջ ալ Արտաշէս Բ.ի օրերով Արտիմետի հրաշանըրկար շինուածներովը մեր ազգային պատմութեան ամենէն բանաստեղծական դարու թագաւորին և արբունեաց ու Սամինկան զջխոյի զարպաներով՝ զարգարուած, և յետոյ ժամանակաւ Թաթարաց արշաւանքին առջև Սենեկերիմայ Արծրունեաց թագաւորին չարախորհուրդ գաղթական ի Սկրաստիա 800.000 հոգուովք արանց և կանանց՝ անապատացած, մինչև հիմնայ բազմացել Քրիստու տէրէպէ յիներու, աւազակաց որջ ու կաղաղ դարձած ըլլալովը հանգերձ դարձեալ հարստահարեալ, նեղեալ, վշուցեալ բազմաչարչար Հայութեան բուն իսկ այժմեան Քիւրտիստանու և հին Կորդուաց ու Մոկաց քարայեներուն բերանը՝ վերջին պատուար և սահմանագացած կը կենայ :